ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդ. 1. Տարրական դպրոց կոչւում են երկամեայ, չորսամեայ և վեցամեայ դասընթացք ունեցող ուսումնարանները։

Մանօթ. Ամեն մի դպրոց կամ եկեղեցի կարող է առանձին մանկապարտէզ ունենալ։

Յօդ. 2. Տարրական դպրոցի նպատակն է տալ երկու սեռի սաներին տարրական ընդհանուր ուսում և կրթութիւն՝ համապատասխան աստիճանի դպրոցի համար սահմանուած ծրագրի ծաւալով։

Յօդ. 3. Տարրական բոլոր դպրոցները կարող են լինել խառն, այսինքն երկու սեռի սաների համար։

Յօդ. 4. Դպրոցական կառավարութեան ասպարէզում ընտրել ընտրուելու, այլ և պաշտօն վարելու իրաւունք ունեն Հայոց եկեղեցու բոլոր իրաւասու անդամները, առանց հոգևորականի ու ժողովրդականի և սեռի խտրութեան, բացի այս կանոնադրութեան մէջ յատկապէս յիշուած դէպքերից։

II. ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 5. Իւրաքանչիւր տարրական դպրոցի ընթացիկ գործերի անմիջական վարիչներն են նոյն դպրոցի ա) Հոգաբարձութիւնը, բ) Մանկավարժական խորհուրդը, գ) Խառն ժողովը և դ) Տեսուչը։

Ա.) Հոգաբարձութիւն:

Յօդ. 6. Հոգաբարձութիւնը կազմուում է երէցփոխից և 2—4 հոգաբարձուներից, որոնց ընտրում է ծխական ժողովը 3 տարի ժամանակով և հաստատուում թեմական առաջնորդից։ Բացի հոգաբարձուներից ծխական ժողովը ընտրում է նոյն թւով անձնափոխանորդներ։ Հոգաբարձուներն իրենց միջից մէկին ընտրում են նախագահ։

Յօդ. 7. Դպրոցի ամբողջ տնտեսական մատակարարութիւնը հոգաբարձութեան գործն է. նա կազմում է դպրոցի նախահաշիւը և իւրաքանչիւր տարուայ վերջը ներկայացնում է տնտեսական մասի տեղեկագիր թեմական առաջնորդին և ծխական ժողովին։ Հոգաբարձուները իրաւունք ունեն ներկայ լինելու դասերին, քննութիւններին և մանկավարժական խորհրդի նիստերին առանց ձայնի իրաւունքի, այլ և իրաւունք ունեն հարցապնդումներ անելու Մանկավարժական խորհրդին՝ ուսումնական հարցերի վերաբերմամբ։

Բ) Մանկավարժական խորհուրդ.

Յօդ. 8. Մանկավարժական խորհուրդը կազմուում է դպրոցի բոլոր ուսուցիչներից տեսչի նախագահութեամբ։

Մ ա ն օ թ. Այս կանոնադրութեան մէջ «ուսուցիչ» բառը գործ է ածւում անխտիր բոլոր դասատուների համար։

Յօդ. 9. Մանկավարժական խորհուրդը տնօրինում է դպրոցի ուսումնական վիճակը, հսկում է ուսումնական ծրագրի, կանոնադրութեան ուսումնական մասի և իր որոշումների ճիշտ գործադրութեանը, քննում է ուսումնական տեղեկագրի նախագիծը և վերջնականապէս խմբագրելով ուղարկում է մի-մի օրինակ Հոգաբարձութեան և թեմական Առաջնորդին։

Գ) Խառն ժողով.

Յօդ. 10. Խառն ժողովը կազմուում է բոլոր հոգաբարձուներից և ուսուցիչներից՝ տեսչի նախագահութեամբ։

Տեսչի բացակայութեան՝ այլ և նրան վերաբերեալ գործերի քննութեան դէպքում՝ խառն ժողովը իր միջից ընտրում է մի այլ ժամանակաւոր նախագահ։

Յօդ. 11. Խառն ժողովի իրաւասութեանն են պատկանում։—

ա) թէ՛ ուսումնական և թէ՛ տնտեսական բնաւորութիւն ունեցող խնդիրները։

բ) ուսումնական հարցերի առթիւ Հոգաբարձութեան և Մանկավարժական խորհրդի միջև ծագած թիւրիմացութիւնները։

գ) դպրոցի պաշտօնեաների դէմ յարուցած բողոքները։

դ) տեսչի և ուսուցչի ընտրութիւնն և պաշտօնից արձակելը։

Մանօթ. Նոր դպրոց բացուելու ժամանակ կամ ամբողջ ուսուցչական կազմի լուծուելու դէպքում՝ տեսչի ընտրութիւնը կատարում է Հոգաբարձութիւնը։

ե) Կազմել տարեկան ակտեր, որոնց ժամանակ կարդացւում են դպրոցի տնտեսական և ուսումնական տեղեկագիրները։

Դ) Տեսուչ.

Յօդ. 12. Տեսչին ընտրում է խառն ժողովը և առաջարկում է առաջնորդին ի հաստատութիւն։ Եթէ երեք շաբաթուայ ընթացքում մերժում չստացուի, ընտրութիւնը համարւում է վաւերական։

Մանօթ. 1. Տեսչի ընտրութիւնը սովորաբար կատարւում է ուսումնական տարուայ վերջին (մայիս-յունիս)։

2. Թեմական Առաջնորդի մերժումը պիտի պատճառաբանուած լինի։

3. Եթէ խառն ժողովը համակերպւում է մերժման պատճառաբանութեանը՝ անմիջապէս ձեռնարկում է նոր ընտրութեան։

4. Թեմական Առաջնորդի մերժման դէմ խառն ժողովը

կարող է բողոքել Կենտրոնական Ուսումնարանական Խորհրդին օգոստոսի 1-ից ոչ ուշ։

5. Բողոքելու դէպքում՝ մինչև Կենտր. Ուս. Խորհրդից պատասխան ստանալը Խառն ժողովը ժամանակաւոր տեսչի պաշտօնակատար է ընտրում Մանկավարժական խորհրդի անդամներից մէկին, բայց ոչ տեսչացու ընտրուածին։

Յօդ. 13. Տեսչի պաշտօնից արձակելու առաջարկը կարող է անել Խառն ժողովի իւրաքանչիւր անդամը և թեմական տեսուչը։ Առաջարկը պիտի լինի գրաւոր և պատճառաբանուած։ Խառն ժողովը քննում է առաջարկը, գաղտնի քուէարկութեամբ որոշում է անում, և եթէ որոշում է արձակել, այս որոշումը պատճառաբանուած ուղարկում է թեմական առաջնորդին ի հաստատութիւն։

Մանօթ. Այսպիսի որոշման համար պահանջւում է Խառն ժողովի ամբողջ կազմի (հաշուելով նաև նիստից բացականերին) ձայների $^2/_3$ մասը։ Այս վճիռը ի կատար է ածւում առաջնորդի հրամանով, իրաւունք վերապահելով փոքրամասնութեան բողոքելու և արդարութիւն ու ամբողջ տարուայ ռոճիկ պահանջելու։

Յօդ. 14. Տեսուչը նախագահում է Մանկավարժական խորհրդին, վերահսկու է լինում կանոնադրութեան ուսումնական մասի, ծրագրի և Մանկավարժական խորհրդի որոշումների ճիշտ գործադրութեանը և իր տեսածի մասին զեկուցանում Մանկավարժական խորհրդին. հսկում է դպրոցի կարգապահութեանը, կազմում է տարեկան ուսումնական տեղեկագրի նախագիծը և ներկայացնում Մանկավարժական խորհրդին։

Տեսուչը պարտաւոր է դպրոցում դասեր ունենալ՝ ըստ կարելոյն սահմանափակ թուով, և դպրոցական պարապմունքի ժամանակ դպրոցում գտնուել։ Բացառիկ և ծայրայեղ դէպքերում տեսուչն իրաւունք ունի ուսուցիչներին ժամանակաւորապէս հեռացնել պաշտօնավարութիւնից՝ մինչև Խառն ժողովին զեկուցանելը, որը պէտք է անմիջապէս հրաւիրուի կարգադրելու։

Ե) Ուսուցիչներ.

Յօդ. 15. Ուսուցիչներին ընտրում է Խառն ժողովը տեսչի առաջարկութեամբ և առաջարկում է Թեմական առաջնորդին ի հաստատութիւն։

16) Ուսուցիչ և տեսուչ կարող են լինել այն անձինք, որոնք աւարտել են, 1) Համալսարան, 2) Ճեմարանի լսարաններ, 3) Հայոց թեմական դպրանոցներ, 4) Պետական միջնակարգ դպրոցներ*, 5) պետական ուսուցչական սեմինարիա, 6) որոնք ունին ուսուցչութիւն անելու պետական իրաւունք, 7) որոնց թոյլ կտայ կետրոնական Ուսումնարանական խորհուրդը իրրև բացառութիւն։

Յօդ. 17. Ուսուցիչները արձակւում են նոյն կարգով, ինչպէս տեսուչները (Յօդւած 13)։ Գրաւոր ու պատճառաբանուած առաջարկը պէտք է տրուի տեսչին՝ իրրև Խառն ժողովի նախագահին։

Յօդ. 18. Քառամեայ և վեցամեայ Խառն դպրոցները պիտի ունենան առնուազը մի ուսուցչուհի, իսկ երկամեայ խառն դպրոցները, եթէ տղամարդ ուսուցչի են յանձնուած, պէտք է ունենան մի վերահսկող կին։

---

*) Ծանօթ. Պետական դպրոցներ աւարտածները հայերէն աւանդել կարող են, երբ Զ-րդի ծրագրով լրացուցիչ քննութիւն տալուց յետոյ, ներկայացնեն թեմական դպրոցների վարչութիւններից վկայական։

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԴԱՍԱՑՈՒՑԱԿ ՀԱՄՏԱՏՈՒԱԾ Ա. ԿԵՏՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՑ

Առարկաներ	I	II	III	IV	V	VI	Շաբաթական
1. Կրօնագիտութիւն	2	2	2	2	2	2	12
2. Պատմութիւն	—	—	2	2	4	4	12
3. Քաղաքացիական ուսմունք	—	—	—	—	—	1	1
4. Աշխարհագրութիւն	—	—	2	2	2	2	8
5. Իրաւունութիւն	2	2	—	—	—	—	4
6. Բնական գիտութիւններ	—	—	3	3	3	3	12
7. Առողջապահութիւն	—	—	—	—	—	2	2
8. Հայոց լեզու	6	6	5	5	5	4	31
9. Ռուսաց լեզու	—	—	5	5	5	4	19
10. Թուաբանութիւն	5	5	4	3	3	3	23
11. Երկրաչափական ձևագիտութիւն	—	— / —	1	1	1	1	4
12. Նկարչութիւն	2	2	1	2	1	1	9
13. Վայելչագրութիւն	—	1	1	1	—	—	3
14. Երգեցողութիւն	2	2	2	2	2	1	11
15. Ձեռագործ Ձեռարուեստ	2	2	2	2	2	2	12
16. Մարմնամարզութիւն	Մարմնամարզարան ունեցող դպրոցներում իւրաքանչիւր դասարանում 2 ժ. իսկ չունեցողներում՝ օրական 25 ր.						
Ընդ ամենը	21	22	30	30	30	30	163

Մնացած ժամերը մինչև 36 ժամ յատկացուում են տեղական նշանակութիւն ունեցող գործնական պարապմունքներին, որոնց ընտրութիւնը վերապահուում է տեղական դպրոցական վարչութիւններին։